

**«Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 6, Շուշին՝ հայկական մշակույթի օջախ (Միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, 240 էջ:**



Հայկական գրատպության 500-ամյա հոբելյանին նվիրված, «Շուշին՝ հայ մշակույթի օջախ» թեմայով միջազգային գիտաժողովի անցկացումը Շուշիում, անշուշտ, իր մնայուն տեղն է գտել Արցախի գիտամշակութային կյանքի տարեգրությունում:

Հայաստանի Հանրապետությունում և Աֆիուռքի զանազան մասերում մեծ շուքով տոնված այդ նշանակալի հոբելյանն Արցախում ունեցավ ևս մեկ շեշտադրում՝ մասնագետներին պարտավորեցնելով գիտականորեն արժեքավորելու և վերաիմաստավորելու հայկական իրականության մեջ Շուշիի քաղաքակրթային և մշակութաստեղծ երբեմնի դերը, համակողմանիորեն անդրադառնալու մշակույթի տարբեր ոլորտների նվաճումներին ու զարգացման հեռանկարներին, այդ թվում՝ գրատպության ավանդույթներին, որոնք ծնավորվել էին Արցախի հոգևոր-մշակութային կենտրոններից մեկում:

Այդ կարևոր իրադարձության նշանավորման ու հանրահռչակման գործում կարևոր էր գիտաժողովի նյութերի ժողովածուի հրատարակումը, ինչը իրականացվեց «Կաճառ» գիտական կենտրոնի կողմից՝ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորմամբ: Արցախի, Հայաստանի Հանրապետության և արտասահմանի գիտնականների խնդրո առարկա թեմայի շրջանակներում կատարած վերջին հետազոտությունների արդյունքները, որոնք ներկայացվեցին գիտաժողովի լիազումար ու մասնախմբերի նիստերում, գիտական խմբագրումից ու փորձաքննությունից հետո, տպագրվեցին «Կաճառ» տարեգրքի 6-րդ հատորում:

Ինչպես ծանուցված է ներածական հոդվածում, Կոնֆերանսի կազմակերպիչները, տարբերակների բազմազանության մեջ գերապատվությունը տալով «Շուշին՝ հայ մշակույթի օջախ» թեմային, ձգտել են ուսումնասիրողների առաջ լայն դաշտ բացելու իրենց բազմամյա ուսումնասիրությունների արդյունքներն ազատորեն ներկայացնելու համար: Դրա մասին են վկայում նաև մասնախմբերի թեմատիկ ուղղությունները. «Շուշիի հնագիտական մշակույթը և ազգագրական միջավայրը», «Հայ գրատպությունը և պարբերական մամուլը Շուշիում», «Հոգևոր-եկեղեցական կյանքի և հայ արվեստի զարգացումը Շուշիում»: Ցանկալի էր Շուշիի ճարտարապետության վերաբերյալ վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ընդհանրացնող զեկուցումներ ևս ընդգրկելը, ինչը, սակայն, օբյեկտիվ պատճառներով, չհաջողվեց իրագործել:

Տեղին է նշված, որ թեև կազմակերպիչները հիմնական շեշտադրումները կատարել են միջոցառման գիտական ու մշակութային կողմերի վրա, սակայն մեծ էր նաև քա-

դաքական նշանակությունը: Փաստորեն, Արցախը հնարավորինս ներկայացվեց իր հարուստ անցյալով, քաղաքակրթական արժեքներով, մշակույթի համաշխարհային գանձարանը հարստացրած նմուշներով, որոնք, անշուշտ, մեր հանրապետության միջազգային ճանաչմանը նպաստող գործոններ են: Դրանք ավելի քան համոզիչ են հնչում այլ երկրների ուսումնասիրողների բերանից, էլ չենք խոսում միջազգային կոնֆերանսում լուրջ փորձաքննությունից հետո նյութերը համապատասխան լեզուներով օտարալեզու ընթերցողին հասցնելու գրախոսվող ժողովածուի առաքելության մասին: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորման շնորհիվ Կոնֆերանսի նյութերը հրատարակվել են բնագրերով՝ եռալեզու ամփոփումներով: Ժողովածուի հրատարակումն անհրաժեշտ հակահարված էր Շուշիի պատմության աղբբեջանական խեղաթյուրումներին և, իհարկե, կոչված էր վերականգնելու արտասահմանյան երկրներում աղբբեջանական քարոզչությունից խաթարված հասարակական օբյեկտիվ կարծիքը: Ինչպես կոնֆերանսի ընդունած և ժողովածուում տպագրված հայտարարության մեջ է շեշտվել. «Անթույլատրելի են այսօր էլ Աղբբեջանում շարունակվող, պետականորեն կազմակերպվող ու խրախուսվող՝ Շուշի քաղաքի հայկական անցյալի և հոգևոր-մշակութային արժեքների կողոպուտը, պատմությունն անխղճորեն կեղծելու ու նենգափոխելու, հայկական մշակութային ժառանգությունը սեփականելու փորձերը»:

Շուշիի մշակութային կյանքի վերելքը գալիս է դարերի խորքից և խտացումն է Արցախի հայ ազգաբնակչության ստեղծած մշակութային արժեքների: Ահա թե ինչու 2012թ. սեպտեմբերի 17-19-ը Հայկական գրատպության 500-ամյա հոբելյանին նվիրված «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» թեմայով միջազգային գիտաժողովի անցկացումը հենց Շուշիում խորհրդանշական ու իմաստալից էր, որովհետև Շուշին հանդիսացել է հայ մշակույթի, այդ թվում՝ գրատպության ու հրատարակչական գործի կենտրոններից մեկը: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ԱրԴՀ-ն և Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնը հնարավորինս փորձել են ընդգծել դա գիտաժողովի կազմակերպական մտահղացումներով, մասնավորապես՝ Հայաստանի ազգային գրադարանի անձեռնմխելի պահոցից բերված՝ Շուշիում տպագրված գրքերի ցուցահանդեսով, նախապես դրա տեղեկատուի գունավոր հրատարակությամբ, տեսանյութի ցուցադրությամբ, մասնակիցների ու հրավիրվածների ներկայացուցչական կազմի ապահովմամբ և այլն: Անշուշտ, դրվատանքի են արժանի Արցախում մեր երկրի իշխանությունների աջակցությամբ հերթական միջազգային գիտաժողովի կազմակերպումն ու անցկացումը, ինչն ավելի էր պարտավորեցնում մասնակիցներին՝ արդարացնելու գիտական ու փորձագիտական ուսումնասիրությունների և աշխույժ քննարկումների արդյունքում պատմական գործընթացների դինամիկան համակողմանիորեն հասկանալու, անցյալից համապատասխան ու անհրաժեշտ դասեր քաղելու և դրանով իսկ մեր մշակույթը և հիմնախնդիրները միջազգային հանրությանն ավելի լիարժեք ներկայացնելու հնարավորություն ստանալու ակնկալիքները:

«Պատմություն» բաժնում տեղ են գտել Գ. Ա. Սուքիասյանի «Գիրքը և գրադարանը Արցախի պատմության մեջ», Մ. Ա. Հարությունյանի «Մի էջ Շուշիի պարբերական մամուլի պատմությունից», Ա. Ա. Մելիք-Շահնազարովի «Շուշիի հայկական գրատպությունը և ճարտարապետությունը. Բազելի միսիոներների-ավետարանիչների ազդեցությունը», Ն. Էդ. Բաղդասարյանի «Մի էջ Բաղդասար Հասան-Ջալալյանի լուսավորչական գործունեության պատմությունից», Է. Մ. Մխիթարյանի «Հայկական մշակութային օջախ Շուշին՝ որպես Արցախի և Այսրկովկասի հոգևոր-մշակութային կենտրոն (ռուս պատմագրության գնահատմամբ)», Ա. Քոչարյանի «Շուշիի հայոց թեմական

հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները՝ ըստ արխիվային վավերագրերի», Վ. Ռ. Բալայանի ,19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների Շուշիի շինարարական կառուցողական արվեստի ծեռքերումները և քաղաքի ազգային դիմագծի պահպանման արդի խնդիրները», Ջ. Բուռնությանի «Շուշիի հայ բնակիչների տնտեսական և մասնագիտական ներդրումը ըստ 1822 թվականի մարդահամարի տվյալներին զեկուցումները: «Հնագիտություն և ազգագրություն» բաժնում կարող էք ծանոթանալ Վ. Սաֆարյանի, Հ. Պետրոսյանի, Ն. Ենգիբարյանի «Շուշիի ու նրա շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները և հեռանկարները», Գ. Մ. Սարգսյանի «Կարկառ քաղաքի հայտնաբերումը և ուսումնասիրության առաջին արդյունքները», Հ. Մ. Հարությունյանի «Շուշին ըստ 18-20-րդ դարերի քրիստոնեական ու մահմեդական գերեզմանատների վիմագրերի», Թ. Լ. Հայրապետյանի «Առասպելական տարրերը Բահայությանների գրառած հրաշապատում հեքիաթներում», Ե. Ջաքարյանի «Կյանք՝ նվիրված հայրենի եզերքի բանավոր արժեքների պահպանմանը», Լ. Ղուշյանի, Ե. Ռադիոնովայի «Շուշիի մշակութային կյանքը Ռուսաստանյան Ազգագրության Թանգարանի հավաքածուներում», Ն. Սարգսյանի «Ժամանցը և ժամանցի հանրային վայրերը Շուշիում 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին» զեկուցումների: «Լեզվաբանություն և արվեստ» բաժնում տեղ են գտել Օ. Ե. Բաբայանի «Լեզվավիճակը Շուշիում XIX դարի առաջին կեսին», Յու. Յու. Հարությունյանի «Շուշիի թատրոնը և նրա ներկայությունը Արցախի թատերական իրողությունների պատմության մեջ», Լ. Ա. Հարությունյանի «Շուշիի թատրոնի ոսկեդարը», Լ. Ս. Գասպարյանի «Ստեփան Աղաջանյանի ստեղծագործությունների կերպարային ու պատկերագրական համակարգը» զեկուցումները: «Հոգևոր-եկեղեցական կյանք» բաժնում ընդամենը երկու զեկուցումներ են. Լ. Է. Սուլեյմանյանի «Հոգևոր դիմադարձման զուգահեռներում» և Հ. Լ. Մկրտչյանի «Շուշիի Կուսանաց անապատը»: Հավելվածում ժողովածուի խմբագրի մտահղացմամբ հրապարակվել է Գ. Հ. Հարությունյանի և Ա. Ս. Ավանեսյանի «Աղբբեջանի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հանրակրթության ոլորտում» հոդվածը, որը կոչված է մասամբ լրացնելու ժողովրդական կրթության ոլորտի բացը: «Լրատու» բաժնում կարդում ենք հենց Շուշիում պատմավիպասան Հայկ Խաչատրյանի գրական վաստակի արժեքավորման մասին պատմող թղթակցությունը:

Ժողովածուի վերոնշյալ բովանդակությունից իսկ ակնհայտ է, որ այն ընդգրկում է հարցերի լայն շրջանակ, ուշագրավ ու հետաքրքիր թեմատիկա և հեղինակների ներկայացուցչական կազմ, գործոններ, որոնք բարձրացնում են կատարված աշխատանքի արժեքն ու նշանակությունը: Գրախոսվող ժողովածուն օգտակար կարող է լինել մասնագետների, ուսանողների և, ընդհանրապես, ընթերցասեր հասարակայնության համար:

Արարատ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Պ.գ.թ., դոցենտ